

ՌՈՒԴՈԼՖ
ԽԱՉԱՏՐՅԱՆ

Rudolf Khachatryan Digital Archive · https://rudolfart.com/catalogues/RKh-Cat-149?lang=en



1987

Rudolf Khachatryan Digital Archive · https://rudolfart.com/catalogues/RKh-Cat-149?lang=en

СОЮЗ ХУДОЖНИКОВ АРМЕНИИ
ДОМ ХУДОЖНИКА АРМЕНИИ
ГОСУДАРСТВЕННАЯ КАРТИННАЯ ГАЛЕРЕЯ АРМЕНИИ

РУДОЛЬФ ХАЧАТРЯН

НАРОДНЫЙ ХУДОЖНИК
АРМЯНСКОЙ ССР

ЕРЕВАН
1987

Rudolf Khachatryan Digital Archive · https://rudolfart.com/catalogues/RKh-Cat-149?lang=en

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԿԱՐԻՉՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԿԱՐՉԻ ՏՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱՍՐԱՀ

ՌՈՒԴՈԼՖ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՆԿԱՐԻՉ

ԵՐԵՎԱՆ
1987

Rudolf Khachatryan Digital Archive · https://rudolfart.com/catalogues/RKh-Cat-149?lang=en

Rudolf Khachatryan Digital Archive · https://rudolfart.com/catalogues/RKh-Cat-149?lang=en

ՌՈՒԴՈԼՖ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԱՐՎԵՍՏԸ

Ռուդոլֆ Խաչատրյանի ստեղծագործությունը եզակի երևույթ է ժամանակակից կերպարվեստում: Այդ եզակիությունը ոչ թե նրա ինչ-որ մեկ որոշակի յուրահատկության, այլ արդի արվեստի համար էականորեն կարևոր մի շարք՝ բարոյական և գեղագիտական, աշխարհայացքային և հոգեբանական, փիլիսոփայական և բանաստեղծական խնդիրների լուծումների համատեղման, լծորդման, տրամախաչման մեջ է:

Ռ. Խաչատրյանի աշխատանքների ժանրային ընդգրկումը լայն չէ. այն սահմանափակվում է դիմանկարով ու նատյուրմորտով, վերջին ժամանակներս նկարիչը դիմում է նաև բնանկարին: Թվում է, թե այդ ժանրերը ծայր աստիճան հեռու են իրարից, սակայն Ռ. Խաչատրյանը ժխտում է սովորական դարձած այդ պատկերացումը: Խընդիրը ոչ միայն այն է, որ նրա դիմանկարներում առարկաները կարևոր տեղ են գրավում՝ համադրվելով պատկերված մարդու հետ, այլև այն, որ բնորդի մարմնավոր նկարագիրը խիստ նյութական է: Արհամարհելով նատուրալիստական մանրամասնումի վտանգը՝ նկարիչը սիրով ու խնամքով մշակում է մարդկային մարմինը, մաշկը, մազերի ֆակտուրան, ասես, կենդանի նյութը հավասարեցնելով նրան հարևանող հագուստի նյութին: Մյուս կողմից՝ Ռ. Խաչատրյանի նատյուրմորտներում յուրաքանչյուր առարկայի պատկերն այնքան անհատականացված է և բնահատուկ, որ կարող է լիակատար իրավունքով կոչվել դիմանկարային. օրինակ, «Նատյուրմորտ սափորով ու ձկնով» գործում (1981 թ.) բոլոր երեք առարկաները՝ սափորը, ձուկն ու սոխի գլուխը ոչ միայն պլաստիկ բնութագիր ունեն, այլև իրենց բնավորությունը, հոգեբանությունը (ակամա հիշում ես, որ գոյի առարկայականության պատկերման նման եղանակը ֆրանսիացիները ժամանակին բնորոշել են իրրև «դիմանկարում»):

Իսկ ինչո՞ւ Ռ. Խաչատրյանին երբեք և ոչ մի տեղ չի սպառնում ճշմարիտ արվեստի համար մահացու նատուրալիզմի պատրանքայնությունը: Որովհետև նա հոգևորը չի հանգեցնում նյութականի, այլ, ընդհակառակը, նյութականը բարձրացնում է հոգևորի աստիճանին. մարդու պատկերման մեջ նա դրան հասնում է նախ և առաջ հոգեբանական բնութագրման ուժով ու սրությամբ, նատյուրմորտում՝ առարկայի կեցության, նրա անհատականության, հագեցվածության ու գեղեցկության, երբեմն էլ՝ առարկայական ձևի վսեմության հանդեպ սիրով և, ես կասեի, չափազանց հարգալից, գրեթե ակնածալից վերաբերմունքով:

Կերպարվեստի լեզվի այս մակարդակի վրա արդեն Ռ. Խաչատրյանի արվեստը հագենում է փիլիսոփայական որոշակի իմաստով. նկարիչը ոչ թե պարզապես պատկերում է աշխարհը, այլ պատկերային ձևով իմաստավորում է այն, նմանության է ձգտում ոչ թե հանուն նմանության, այլ ձգտում է հասու լինել այն բանին, թե կեցության ընդհանուր օրենքներն ինչպես են դրևորվում առարկայական ձևերի բազմազանության մեջ: Այդ ընդհանուր օրենքները՝ ներդաշնակություն, վսեմություն, հանգստավետություն իրքնաբավ նշանակություն ունեն և ամբողջական-միասնական են գոյության անսահմանորեն բազմադեմ առարկաներում, հավասարնշանակ են մարդու ֆիզուրում և ծառի նյութի մեջ, խճաքարում և մետաղի անոթում, ընկույզի կեղևի և դեկորատիվ նրբագեղ գործվածքի մեջ: Չափազանց բնորոշ է այն, որ Ռ.Խ աչատրյանը սիրում է իր նատյուրմորտները կառուցել իրրև բազմաֆիգուր նկարներ («Մեծ նատյուրմորտ», 1982 թ., «Հալելիով նատյուրմորտ», 1983 թ.), ուր ամբողջ տեսարաններ են «խաղացվում» տարբեր առարկաների փոխգործողությամբ, որոնք երկխոսության մեջ են մտնում իրենց եզակի մարմնի ձևի, ֆակտուրայի, նկարագրի նմանությամբ և տարբերության շնորհիվ, և այդ լուռ երկխոսությունները չափազանց հետաքրքիր են համադրությունների և հակադրությունների սրությամբ:

Խոսքը, անշուշտ, ոչ թե պարզապես առարկաների պատկերման, այլ որոշակի աշխարհզգացողության,

Rudolf Khachatryan Digital Archive · https://rudolfart.com/catalogues/RKh-Cat-149?lang=en

գոյի որոշակի փիլիսոփայության արտահայտման մասին է:

Սկզբում կարող է թվալ, թե նման աշխարհընկալման մեջ ինչ-որ ոչ ժամանակակից, արխաիկ բան կա. և իրոք, այն ստիպում է մտաբերել բնության, մարդու, առարկաների վերածնության շրջանի պանթեիստական զգացողությունը: Եվ զարմանալի չէ, որ Ռ. Խաչատրյանի ստեղծագործության մասին գրող հեղինակները միշտ նշել են նրա խորին ակնածանքը Լեոնարդո դա Վինչիի նկատմամբ և տարբեր ազդեցություններ են տեսել՝ հանճարեղ նկարչից եկող: Եվ այնուհանդերձ, Ռ. Խաչատրյանի համար որքան էլ նշանակալի լինի մեծ ֆլորենտացու գեղագիտական հեղինակությունը,— նկարիչն ինքն է խոսում այդ մասին սիրով ու հափշտակությամբ,— նրա գործերում շատ ավելի խոր է զգացվում հոգեհարազատությունը բնության ռենեսանսյան զգացողության, քան անհատական կապը վերջինիս որևէ ներկայացուցչի հետ: Համենայն դեպս, Ռ. Խաչատրյանը գիտակցում է դա, թեև ոչ, նրա աշխատանքները զուգորդումներ են հարուցում ոչ միայն Լեոնարդոյի, այլև Ռաֆայելի, Դյուրերի, Ջորջոնեի, Կլուեի ստեղծագործության և նույնիսկ՝ Դոնատելլոյի քանդակների հետ: Եվ այս պարագան կարոտաբաղձ ռեմինիսցենցիա չէ, մեր օրերում ոչ այնքան տարածված ծեքծեքուն «ռետրո» չէ, այլ աշխարհայացքային խոր հարազատություն, որ հանգեցնում է նման լուծումների, չնայած քսաներորդ դարի նկարչի ուղին միանգամայն ինքնուրույն է:

Հիրավի, ինչն է զարմացնում Ռ. Խաչատրյանի դիմանկարներում՝ ում էլ նա պատկերի: Նախ և առաջ՝ պատկերվող դեմքի նշանակալիությունը, որ հիշեցնում է Վերածնության տիտանների դեմքերը: Մեր ժամանակակիցը մարդու մեջ փնտրում է բնավորության ուժը, ներքին արժանավորությունը, սեփական հնարավորությունների գիտակցությունը՝ արտահայտված ոչ թե սոցիալական դիրքով, պրոֆեսիոնալ պատկանելությամբ, գրաված պաշտոնով, այլ հենց նրա հոգևոր հատկանիշներով: Ուստի դիտողի համար այնքան էլ էական չէ, թե որոշակիորեն ով է պատկերված նկարում՝ ակադեմիկոս Միքդալը, թե անձնանոթ մի անձնավորություն՝ թաքնված «Վ. Մ.» սկզբնատառերի տակ, ազգագրագետ Լ. Աբրահամյանը, թե անհնուն «Քարվանքաշին», քանի որ, բոլոր դեպքերում, մեզ գրավում է ծանոթությունը Մեծ մարդու, այսինքն՝ մեծատաղանդ Մարդու հետ: Հաղորդելով Ռ. Խաչատրյանի հերոսներից ստացած այդ զգացողությունը՝ նշանավոր բանաստեղծ Արսենի Տարկովսկին հիանալի է ասել. «Պարզվում է, որ «հասարակ մարդիկ» չկան աշխարհիս երեսին: Ուզում ենք Ռուդոլֆ Խաչատրյանի «գրաֆիկայի» պաթոսն անվանել հերոսական: Իրենց բնորոշներին այդպես են պատկերել վաղնջական ժամանակների փառաբանված նկարիչները որմնանկարներում ու կտավներում... Ես էլ, նկարչի նման, ուզում եմ հավատալ մարդու հերոսականությանը»: Իսկ գեղանկարիչ Թահիր Սալախովը նույն զգացողությունը հաղորդել է այս խոսքով՝ «Հազվագյուտ արվեստագետներ են բարձրացել-հասել մարդու նկատմամբ այնպիսի սիրո, այնպիսի հարգանքի, ինչպիսին Խաչատրյանը»:

Ռ. Խաչատրյանը ցանկանում է, կարծես, որ իր հերոսները մեր երևակայության մեջ համատեղվեն Վերածնության դարաշրջանի վետ-իդեալական մարդկանց կերպարների հետ և մեր ընկալումն այդ ուղղությամբ տանում է գեղարվեստական տարբեր հնարանքներով՝ մերթ հերոսի մարմնի մերկությամբ ու կեցվածքով («Վտարանդի» 1981 թ., «Բնորդուհի», 1981 թ.), մերթ դեկորատիվ ծալազարդումով կամ գլխարկի ձևով («Մոդո», 1982 թ. «Հնաոճ բերետով աղջիկը» 1978 թ.), մերթ խորագրով («Դավիթ», 1978 թ., «Հուդիթ», 1976 թ., «Երիտասարդ իտալուհու դիմանկար», 1981 թ.), մերթ «խոսուն» մանրամասով՝ խնձորը դերասանուհի Սայկոյի (1976 թ.) կամ մերկ բնորդուհու (1981 թ.) ձեռքին, և միշտ՝ մոնումենտալ կոմպոզիցիայով ու ձևերի ազնիվ մշակումով:

Ռ. Խաչատրյանը ռենեսանսյան հանգով է ընկալում նաև տղամարդու և կնոջ միջև եղած տարբերությունը: Նրա գործերում կանանց կերպարներն ավելի վճռականորեն են իդեալականացված, քան տղամարդկանց կերպարները, եթե վերջիններիի մեջ նա տեսնում է գործուն-կամային նախահիմքը, ապա առաջիններում՝ նուրբ բանաստեղծականը, հայեցողականը, «հավերժ կանացին», ինչպես անվանում էին մի ժամանակ... Ուստի այնպես գրավում է կնոջ մատաղատի մերկ մարմնի պատկերը, որի հմայքն ընդգծվում է հագուստի մանրամասով, դեկորատիվ ծալազարդումով, և որը ամեն մի, նույնիսկ «ամենավտանգավոր» դիտակետից պահպանում է ողջախոհ բանաստեղծականությունը, բարոյական մաքրությունը:

Մշակույթի պատմական երկու՝ ժամանակակից և ռենեսանսային շերտերի այս համատեղման մեջ ես տեսնում եմ ոչ թե ներկան գունազարդելու և ոչ էլ նրանից փախուստ տալու միտումը, այլ վստահությունը՝ պոեզիայի անանց արժեքի և մարդկային գոյի վեհության նկատմամբ, մարդու այն հնարավորությունների գեղարվեստական ապացույցը, որ նա կարող է հոգեպես լինել վսեմ, գեղեցիկ, բանաստեղծական... Այդ իսկ պատճառով Ռ. Խաչատրյանի արվեստը չի կորցնում իր ռեալիստական բնույթը, բայց դա հատուկ տիպի, ոճական հատուկ կառուցվածքի ռեալիզմ է:

Սովետական արվեստի պատմությունը փորձել է տարբեր մեկնակետեր՝ ռեալիստական մեթոդի զարգացման համար՝ և պերեդվիժնիկների կենցաղային պատկերի ոճը, և միջնադարյան սրբապատկերի սիմվոլիզմը, և ռոմանտիկականի գերազանցությունը առօրեականի համեմատ, և իմպրեսիոնիստական, և էքսպրեսիոնիստական գեղարվեստական արտահայտչամիջոցները... Այդպես ի հայտ եկավ սոցիալիստական ռեալիզմի ոճական հնարավորությունների բազմազանությունը՝ հակառակ տարբեր կարգի դոգմատիկների դիմադրության, որոնք

Rudolf Khachatryan Digital Archive · https://rudolfart.com/catalogues/RKh-Cat-149?lang=en

փորձում էին սովետական արվեստի ռեալիզմը հանգեցնել ոճական որևէ մեկ ստրուկտուրայի: Ռ. Խաչատրյանի արվեստն այս սպեկտրում ոճական ևս մի շերտ է բացում, ուր ռեալիզմը սինթեզվում է ռենեսանսային դասականության հետ: Անպտուղ բան կլիներ դատել՝ ոճական այդ կողմնորոշումը լավ է, թե վատ նրանցից, որ ունեցել են Պետրով-Վոդկինը, Կոնչալովսկին, Դեյնեկան, Իոգանսոնը, Կորինը, իսկ հայ արվեստում՝ Սարյանը, Քոչարը, Հակոբյանը, Ավետիսյանը: Լավ է, ավելին՝ անհրաժեշտ է հենց սպեկտրը՝ ոճական համակարգերի լայն բազմազանությունը, որ ռեալիստական մեթոդին իրականության գեղարվեստական իմաստավորման ամբողջականություն է տալիս: Ռ. Խաչատրյանի արվեստը ժամանակակից նկարչական մշակույթի անհրաժեշտ, գեղագիտական զորեղ և մարդու ներդաշնակ զարգացման հեռանկարում չափազանց կարևոր մի երգիր է:

Սակայն գեղագիտական լիարժեքություն ձեռք բերելու համար անհրաժեշտ էր գտնել այնպիսի միջոցներ, որ ունակ լինեին լիովին և ստույգ մարմնավորելու այդ վեհորեն ներդաշնակ ընկալումը, ինչպես նկարիչն էր ընկալում աշխարհն ու մարդուն՝ աշխարհում: Սկզբնական շրջանում Ռ. Խաչատրյանը դեռ չուներ այդ միջոցները, սակայն նրա վաղ տարիների գծանկարներն արդեն պատանու բնական հազվագյուտ օժտվածության վկայություններն էին: Տաղանդի առնականացման հետ մեկտեղ նա անհրաժեշտություն էր զգում գտնելու մոնումենտալ գրաֆիկայի այնպիսի միջոցներ, որոնք ունակ լինեին գեղանկարչի կտավին կամ քանդակագործի կերտվածքին հավասարազոր գեղարվեստական նշանակությամբ օժտել գծանկարը: Ռ. Խաչատրյանը համոզված է, որ քանդակագործությունն ու գեղանկարչությունը ռահվիրայի իրենց դերն են կատարել գեղարվեստական մշակույթի մեջ, առաջինը՝ անտիկ շրջանում, երկրորդը՝ Վերածննդյան դարաշրջանում, և որ՝ ժամանակակից աշխարհզգացողությունը համանման հնարավորություններ է բացում գրաֆիկայի առաջ: Իրականացնել այդ հնարավորությունները՝ կնշանակեր ձեռք բերել պլաստիկական այնպիսի լեզու, որը գծանկարն իր բովանդակության տարողությամբ կդներ գունանկարչական և քանդակային պատկերների կողքին: Այդ խնդրի լուծումը եղավ սեպիայով գծանկարը լևկասի վրա, որ հավասար հնչեղ սպիտակի շերտով ծածկում է տախտակի մեծ մակերեսը (60×80, 80×100, 100×130) և ընդունում զանազան բարձրության, լայնության ու խորության ստվերագծում՝ զուգորդված տարբեր աստիճանի հագեցվածություն ունեցող բծի հետ: Այդ եղանակով ձեռք բերված պատկերի թափանցիկությունը, լուսաստվերի խաղը, տոնային տարբերակումները ստեղծում են գույնի, կոլորիտի անսպասելի էֆեկտ, միաժամանակ, որպես գլխավոր մոդելավորող միջոց, պահպանում նրբին գիծը և սրա օգնությամբ կառուցվող ծավալային ձևը: Այդպես գծանկարը մոնումենտալ, վեհատեսիլ բնույթ ստացավ՝ հավասարակշիռ միասնության մեջ պահելով կշռելիությունն ու լուսաճաճանչ թեթևությունը, նյութականությունն ու թափանցիկությունը:

Նման արվեստի ընդհանուր հոգեբանական-պլաստիկական համակարգին պետք է համապատասխաներ նաև յուրաքանչյուր «գեղանկարչական գծանկարի» (այլ կերպ չես կարող կոչել Ռ. Խաչատրյանի գործերը) կոմպոզիցիոն կառուցվածքը, որ սինթեզում է կերպարվեստի այդ երկու տեսակների առանձնահատկությունները: Եվ նկարիչն իրոք դրանք կառուցում է դասական գունանկարի սկզբունքներով՝ խստորեն հավասարակշռված, երբեմն նույնիսկ ընդգծուն սիմետրիկությամբ (Լ. Աբրահամյանը, Ա. Միզդալի, Ս. Ցամշչիկովի դիմանկարները, երեք ձկներով նատյուրմորտը, «Առավոտ. արվեստանոց» գործը), պատկերվող առարկաները զետեղելով տախտակի հարթության վրա փոքր-ինչ ցածր դիտանկյունից, որ նպաստում է ընդհանուր տպավորության մոնումենտալ հնչողությանը: Յուրաքանչյուր առարկա կառուցված է իբրև ճարտարապետական հորինվածք, որ բացառում է ամենայն պատահականը, անցողիկը, իմպրեսիոնիստականը: Կոմպոզիցիան ընդգծում է, որ իր կրողը թռուցիկ տպավորության «արձանագրում» չէ, կանգնեցված ակնթարթ չէ, այլ աշխարհի ռացիոնալ վերակառուցում, որ բովանդակում է մտորումներ գոյի իմաստի շուրջ, տեսանելի փիլիսոփայություն: Ամբողջ ասվածի լույսի տակ զարմանալի չի թվում Ս. Ցամշչիկովի դատողությունը. «Ես, որպես վերականգնող նկարիչ և արվեստաբան, հաճախ եմ գործ ունենում տարբեր դարաշրջանների, երկրների, դպրոցների ու ոճերի նկարիչների ստեղծած արվեստի երկերի հետ: Ականատես կերպարվեստի ժամանակակից երևույթների գնահատման մեկնակետ են դառնում այն չափանիշները, որ կիրառելի են անցյալի հուշարձանների նկատմամբ: Եվ պետք է ասեմ, որ Ռուդոլֆ Խաչատրյանի աշխատանքներն ունեն այն հատկանիշները, որոնք այսօր արդեն թույլ են տալիս դրանք անվանել թանգարանային»: Ազգային ո՞ր դպրոցին է պատկանում Ռ. Խաչատրյանի արվեստը: Նա աճել ու դարձել է Հայաստանի նկարիչ, նա իրեն համարում է Ե. Քոչարի աշակերտը, և նրա ստեղծագործության մեջ պարզորոշ տեսնում ենք այն թելերը, որ նրան կապում են հայ արվեստի շատ ավանդույթների հետ: Միաժամանակ, գրեթե երկու տասնամյակ է, ինչ Ռ. Խաչատրյանն ապրում է Մոսկվայում, և հենց այստեղ է վերջնականապես ձևավորվել նրա ոճը, այստեղ է նա դարձել հասուն վարպետ:

Տարբեր ազգային ավանդույթների համաձուլվածքը խիստ բնորոշ երևույթ է ժամանակակից ամբողջ մշակույթի համար: Սրա ցայտուն արտահայտությունն է, այսպես կոչված, բիլինգվիզմը, այսինքն՝ երկու լեզվի տիրապետելը: Գրականության մեջ այս երևույթն արհայատվում է արձակագիրների կամ բանաստեղծների՝ երկու լեզվով ազատ գրելու ունակությամբ, երաժշտության մեջ՝ արևելյան ֆոլկլորային երաժշտական կուլտուրայի ինտոնա-

Rudolf Khachatryan Digital Archive · https://rudolfart.com/catalogues/RKh-Cat-149?lang=en

ցիոն համակարգի և եվրոպական սիմֆոնիզմի, օպերայի, ջազի լեզվի խաչավորմամբ: Քսաներորդ դարի կերպարվեստում, մասնավորապես հայ նկարչության մեջ, գեղարվեստական մտածողության ազգային տարբեր տիպերի համաձուլվածքը բավական հաճախադեպ երևույթ է (օրինակ՝ Բաժբեուկ-Մելիք-յանի, Հ. Կալենցի, Հ. Հակոբյանի մոտ): Ռ. Խաչատրյանի ստեղծագործության մեջ ազգային պատկանելության զգացմունքի այդ կրկնավորումն ակներև արտահայտվում է նատյուրմորտների կառուցվածքում՝ մերթ որպես «հայկական», մերթ որպես «ռուսական» իր այուժեով, այսինքն՝ դրանց մեջ ներկայացված առարկաներով ու պտուղներով, ընդ որում, թե մեկը և թե մյուսը նկարչի համար «սեփական» են, հավասարապես զգացված և հավասարապես սիրված:

Սակայն Ռ. Խաչատրյանի ստեղծագործության մեջ, ըստ երևույթին, կատարվել է ավելի բարդ պրոցես՝ համաշխարհային արվեստի պատմության բազմազգ ավանդույթների խաչավորում. հենց Վերածնության իտալացի և գերմանացի վարպետներից է Մոսկվայում ապրող ժամանակակից հայ նկարիչն ուսանում աշխարհի վեհաշուք մարմնավորումը:

Կարծում ենք՝ ազգային տարբեր ավանդույթների և միաժամանակ ավանդականի ու արդիականի առավել օրգանական միաձուլումն արտահայտված է Ռ. Խաչատրյանի ինքնադիմանկարների շարքում: Ռեմբրանդտի նման մեր նկարիչն էլ պարբերաբար զննում, ուսումնասիրում, խստապահանջորեն գնահատում է իրեն, գրեթե ամեն տարի նա այդպիսի գեղագիտական և հոգեբանական «վերաքննում» է կատարում՝ անկեղծորեն ու անմիջականորեն բացահայտելով իրեն մարդկանց, մշակույթի պատմության, սերունդների առաջ:

Իրեն կողքից դիտելու, իր տեղը արվեստում իմաստավորելու միտումն առանձնապես կարևոր է մեր ժամանակներում՝ ժամանակակից գեղարվեստական մշակույթի անցումնային վիճակի բարդությամբ պայմանավորված, որը ձգտում է պահպանել ազգային յուրօրինակությունը, հասնել համամարդկային միասնության, մարդուն մերձեցնել բնությանը և հակառակը՝ վերջինս ենթարկել մարդուն, հասնել անհատի անսահման զարգացմանը և, միաժամանակ, մարդկանց ավելի ու ավելի լայն զանգվածների սոցիալական միավորման, ինտելեկտուալ լարված կյանքի և հուզական արձագանքի սրության պահպանման, աշխարհի խստորոշ գիտական ըմբռնման և միաժամանակ աշխարհի, բնության, մարդու մեջ ամբողջ մարդկության հանդեպ տածած սիրո: Այս հակասական ձգտումները կարող են թվալ անհնարին, իրականության մեջ անհամատեղելի հակադիր ուժեր, բայց կարող են և ըմբռնվել որպես դիալեկտիկական նույնականության երկու կողմեր, որոնք ոչ միայն ունակ են հակադրվելու միմյանց, այլև միավորվելու մեկ ներդաշնակ ամբողջի մեջ: Ռ. Խաչատրյանի արվեստի ուժը, գաղափարագեղագիտական արժեքը, սոցիալական բարձր նշանակությունն այն է, որ համոզում է նման ներդաշնակության հնարավորության, անհրաժեշտության և ռեալության մեջ: Իհարկե, շատ մարդկանց, որոնք ապրել են համաշխարհային վերջին պատերազմի աղետները և զգում են նոր, առավել աննախադեպ պատերազմի վտանգը, ովքեր սուր են ապրում մեր ժամանակների բազմաթիվ բախումները, գժտությունները, դրամաները (ռասայական և ազգային ճնշում, սոցիալական անհավասարություն, տեռորիստների սանձարձակություններ, հոգևոր արժեքների կորուստ «մասսայական կուլտուրայի» դրամի և իրերի պաշտամունքի ներգործությամբ): Նման մարդկանց, ժամանակի ողբերգական լարվածությանը համապատասխան, գեղարվեստական մի այլ խոսք է թվում Պիկասոյի նկարչության, Շյոնբերգի երաժշտության, Բեքետի թատրոնի լեզուն... Բայց չմոռանանք, որ Պիկասոյի «Գերնիկայում» հնչող սարսափի աղաղակի հետ մեկտեղ մեծ իսպանացու ստեղծագործության մեջ մենք տեսնում ենք նաև անտիկ մշակույթի իդեալական ձևերի մշակումը, ասես նկարիչը ցանկացել է մարդկությանն ապացուցել, որ անցողիկ են քաոսը, քայքայումը, անկումը և անանց ու բացարձակ է բնության հետ, ուրիշ մարդկանց և ինքն իր հետ մարդու ներդաշնակության արժեքը:

Հենց այդ ներդաշնության մասին է խոսում նաև Ռուդոլֆ Խաչատրյանի ստեղծագործությունը, խոսում է յուրովի, անկրկնելի և զորեղ, ճշմարիտ գեղարվեստական լեզվով: Հավատանք ուրեմն, որ նրա ստեղծած կերպարների աշխարհը նոր ուտոպիա չէ, այլ ռեալ հնարավորություն, որի իրականացումը կախված է հենց մեզնից՝ քսաներորդ դարի մարդկանցից...

ՄՈՒՍԵՅ ԿԱԳԱՆ
Արվեստաբան, փիլիսոփայական գիտությունների դոկտոր

Rudolf Khachatryan Digital Archive · https://rudolfart.com/catalogues/RKh-Cat-149?lang=en

ИСКУССТВО РУДОЛЬФА ХАЧАТРЯНА

Творчество Рудольфа Хачатряна — уникальное явление в современном изобразительном искусстве. Уникальность эта не в какой-то одной его конкретной особенности, а в соединении, сопряжении, скрещении решений нескольких существенно важных для современного искусства проблем, проблем нравственных и эстетических, мировоззренческих и психологических, философских и поэтических. Жанровый спектор работ Р. Хачатряна неширок — он ограничивается портретом и натюрмортом, в последнее время художник обратился и к пейзажу. Казалось бы, жанры эти крайне далеки друг от друга, однако Р. Хачатрян опровергает это привычное представление. Дело не только в том, что в его портретах вещи занимают существенное место, сопоставленные с изображаемым человеком, но и в том, что сам телесный облик портретируемого вещественен до предела — пренебрегая опасностью натуралистической детализации, художник любовно и тщательно разрабатывает поверхность человеческого тела, фактуру волос, как бы приравнивая живую материю веществу соседствующей с ней одежды; с другой стороны, в натюрмортах Р. Хачатряна изображение каждого предмета столь индивидуализировано и характерно, что может быть с полным правом названо портретным: например, в «Натюрморте с кувшином и рыбой» 1981 г. все три предмета — кувшин, рыба и головка лука — имеют каждый свой характер, свою психологию, а не только пластическую характеристику (невольно вспоминаешь, что такой способ изображения предметности бытия французы определяли некогда как «портретирование»).

Почему же Р. Хачатряну нигде и никогда не угрожает смертельная для подлинного искусства иллюзорность натурализма? Потому, что он не сводит духовное к материальному, а, напротив, возвышает материальное до уровня духовного: в изображении человека это достигается прежде всего силой и остротой психологической характеристики, в натюрморте — любовным и, я сказал бы, предельно уважительным, чуть ли не благоговейным отношением к бытию вещи, к ее индивидуальности, к наполненности и красоте, а подчас и величественности формы. Уже на этом уровне изобразительного языка искусство Р. Хачатряна наполняется явственным философским смыслом: художник не просто изображает мир, но изобразительно осмысляет его; он стремится не к сходству ради сходства, а к постижению того, как общие законы бытия проявляются в разнообразии предметных форм; эти общие законы — гармония, величавость, умиротворенность довлеющего себе и целостно-единого в бесконечно разноликих предметах существования, равнозначительного в фигуре человека и веточке дерева, в яблоке и металлическом сосуде, в скорлупе ореха и изящной декоративной ткани. Чрезвычайно характерно, что Р. Хачатрян любит строить натюрморты как многофигурные картины («Большой натюрморт» 1982 г., «Натюрморт с зеркалом» 1983 г.), в которых разыгрываются целые сцены во взаимодействии разных вещей, вступающих друг с другом в диалог благодаря сходству и различию в форме, фактуре, характеру своей уникальной плоти, и эти безмолвные диалоги оказываются чрезвычайно интересными, я бы сказал —

Rudolf Khachatryan Digital Archive · https://rudolfart.com/catalogues/RKh-Cat-149?lang=en

интригующими по остроте сопоставлений и противопоставлений. Речь идет, следовательно, не просто об изображении вещей, а о выражении определенного мироощущения, определенной философии бытия.

Поначалу может показаться, что в таком мировосприятии есть что-то несовременное, архаическое; и в самом деле, оно заставляет вспомнить пантеистическое ренессансное ощущение природы, человека, вещи; неудивительно, что писавшие о творчестве Р. Хачатряна всегда отмечали его преклонение перед Леонардо да Винчи и находили различные переклички в их искусстве. И все же, как ни значителен для Р. Хачатряна эстетический авторитет великого флорентийца — художник сам говорит об этом охотно и увлеченно, — в его произведениях ощущается гораздо более глубокое родство с ренессансным чувством природы, чем персональная связь с кем-то из его представителей; во всяком случае, сознает это Р. Хачатрян или нет, но его работы рождают ассоциации не только с творчеством Леонардо, но и с Рафаэлом, и с Дюрером, и с Джорджоне, и с Клуэ, и даже со скульптурами Донателло; и это не ностальгические реминисценции, не столь популярное в наши дни кокетничающее «ретро», а глубокое мировоззренческое родство, приводящее к сходным решениям, несмотря на то, что путь художника XX века совершенно самостоятелен. В самом деле, что поражает в протретах Р. Хачатряна, кого бы он ни изображал? Прежде всего, значительность изображаемого лица, вызывающая в памяти образы титанов Возрождения; наш современник ищет в человеке силу характера, внутреннее достоинство, сознание собственных возможностей, заключенных не в социальном положении, не в занимаемом кресле, а именно в духовных его качествах; потому не столь уж существенно зрителю, кто именно тут изображен — академик Мигдал или неизвестное ему лицо, скрытое за инициалами «В. М.», этнограф Л. Абраамян или безымянный «Караван-баши», ибо во всех случаях нас покоряет знакомство с Большим человеком, то есть Человеком с большой буквы. Передавая это ощущение от героев Р. Хачатряна, наш выдающийся поэт Арсений Тарковский прекрасно сказал:

«Оказывается, — «простых людей» на свете не существует. Хочется назвать пафос «графики» Рудольфа Хачатряна героическим. Так изображали свои модели прославленные живописцы стародавних времен на фресках и полотнах... Мне тоже, во след художнику, хочется верить в героизм человека». А живописец Танр Салахов передал это ощущение в таких словах: «редко кто поднимается до такой любви, до такого уважения к человеку как Хачатрян».

Р. Хачатрян хочет, чтобы его герои как бы созмещались в нашем воображении с образами величественно-идеальных людей эпохи Возрождения и направляет наше восприятие по этому пути разнообразными художественными приемами — то обнаженностью тела и позой героя («Изгнанник» 1981 г., «Натурщица» 1981 г.), то декоративной драпировкой или головным убором («Моко» 1982 г., «Девушка в старинном берете» 1978 г.), то названием («Давид» 1978 г., «Юдифь» 1976 г., «Портрет молодой итальянки» 1981 г., то «говорящий» деталью (яблоко в руке актрисы Сайко (1976) или обнаженной «Натурщицы» 1981 г.), и всегда монументальной композицией и благородством моделировки формы. По-ренессансному воспринимает Р. Хачатрян и различия между мужчиной и женщиной. Женские образы у него еще более решительно идеализированы, чем мужские: если в последних он видит деятельно-волевое начало, то в первых — нежно-поэтическое, созерцательное, «вечно женственное», как его когда-то именовали... Поэтому так влечет его изображение обнаженного юного женского тела, прелесть которого подчеркивается деталью одежды, декоративной драпировкой, и которое в любом, самом «рискованном» ракурсе, сохраняет у него целомудренную поэтичность, нравственную чистоту.

В этом совмещении двух исторических пластов культуруы — современного и ренессансного — я вижу не способ приукрасить настоящее, и не бегство от него, а уверенность в непреходящей ценности поэзии и величия человеческого бытия, художественное доказательство возможности человека быть духовнозначительным, прекрасным, поэтичным... Искусство Р. Хачатряна не теряет поэтому реалистичности, но это реализм типа, особого стилевого строя.

История советского искусства испытывала разные отправные точки для развития реалистического метода — и стилистику бытовой картины передвижников, и символизм средневековой иконы, и романтическую приподнятость над повседневностью, и импрессионистические, и экспрессионистические средства художественной выразительности... Так обнаруживалось богатство стилевых возможностей социалистического реализма, вопреки попыткам догматиков разного рода свести реализм советского искусства к какой-то

Rudolf Khachatryan Digital Archive · https://rudolfart.com/catalogues/RKh-Cat-149?lang=en

одной стилевой структуре. Искусство Р. Хачатряна открывает в этом спектре еще одну стилевую полосу, в которой реализм синтезируется с ренессансной классикой. Бесплодным было бы рассуждение о том, лучше или хуже эта стилевая ориентация, чем те, которые испытаны Петровым-Водкиным, Кончаловским, Дейнекой, Иогансоном, Кориным, а в армянском искусстве — Сарьяном, Кочаром, Акопяном, Аветисяном; хорош, более того, необходим именно спектр, широкий веер различных стилевых систем, обеспечивающих реалистическому методу полноту художественного осмысления реальности.. Искусство Р. Хачатряна — необходимая, эстетически могучая и чрезвычайно важная в перспективе гармонического развития человека современной изобразительной художественной культуы.

Но чтобы обрести эстетическую полноценность, нужно было найти средства, способные полно и точно воплотить это возвышенно-гармоническое восприятие художником мира и человека в мире. На первых порах Р. Хачатрян еще не располагал этими средствами; однако его ранние рисунки уже выказывали редкую природную одаренность юноши. По мере мужания его таланта ему нужно было найти такие способы монументализации графики, которые были бы способны придать рисунку художественное значение, равное значению картины живописца или творения скульптора Р. Хачатрян убежден в том, что скульптура и живопись сыграли свою роль лидеров художественной культуры — первая в античности, вторая — в эпоху Возрождения, и что современное мироощущение открывает аналогичные возможности перед графикой. Реализовать их — значило обрести такой пластический язык, который поставил бы рисунок по содержательной емкости вровень с живописными и скульптурными изображениями. Решением этой задачи оказался рисунок сепией по левкасу, покрывающему ровным звучно-белым слоем большую поверхоность доски — 60 на 80, 80 на 100, 100 на 130! — и принимающего штриховку разной плотности, ширины и глубины линии в сочетании с пятном разной степени насыщенности. Достигаемая игра светотени, тональные вариации создают таким способом прозрачность изображения, неожиданный эффект цвета, колорита, сохраняя, однако, главным моделирующим средством филигранную линию и вытачиваемую с ее помощью объемную форму. Так рисунок обретал монументальность, величавость, успокоенное соединение весомости и светозарности, материальности и прозрачности.

Общему психологически-пластическому строю такого искусства должна была соответствовать и композиционная структура каждого «картинного рисунка» — иначе не назовешь произведения Р. Хачатряна, синтезировавшие особенности этих двух видов изобразительного творчества. И художник, действительно, строит их по принципам классической живописи, строго уравновешенно, иногда даже подчеркнуто симметрично (портреты Л. Абраамяна, А. Мигдала, С. Ямщикова, натюрморт с тремя рыбами, «Утро. Мастерская»), располагая изображение в плоскости доски, со слегка пониженной точки зрения, способствующей монументализации общего впечатления; каждая вещь выстроена как архитектурное сооружение, исключающее все случайное, мимолетное, импрессионистическое; композиция подчеркивает, что ее носительница — не фиксация беглого впечатления, не остановленное мгновение, а рациональная реконструкция мира, содержащая размышление о сути бытия, зримая философема.

В свете всего сказанного неудивительным кажется суждение С. Ямщикова: «Мне, художнику-реставратору и искусствоведу, приходится иметь дело с поизведениями искусства, созданными художниками различных эпох, стран, школ и стилей. Отправной точкой в оценке современных явлений изобразительного искусства невольно становятся критерии, применяемые к памятникам прошлого. И должен сказать, что работы Рудольфа Хачатряна имеют те качества, которые уже сегодня позволяют именовать их музейными».

К какой национальной школе принадлежит искусство Р. Хачатряна? Он вырос и стал художником в Армении, он считает себя учеником Е. Кочара, и в его творчестве мы явственно видим нити, связывающие его с многими традициями армянского искусства; вместе с тем уже почти два десятилетия Р. Хачатрян живет в Москве, и именно здесь окончательно оформился его стиль, здесь он становится зрелым мастером.

Сплав разных национальных традиций — явление очень характерное для всей современной культуры; его ярчайшее проявление — так называемый билингвизм, т. е. владение двумя языками; в литературе это выражается в способности романистов или поэтов равно свободно писать на двух языках, в музыке — в скрщении интонационного строя восточных фольклорных музыкальных культур с языком европейского симфонизма, оперы, джаза; в изобразительном искусстве XX века, в

Rudolf Khachatryan Digital Archive · https://rudolfart.com/catalogues/RKh-Cat-149?lang=en

частности в армянском, сплав разных национальных типов художественного сознания явление нередкое (например, у Бажбеук-Меликяна, А. Галенца, А. Акопяна). В творчестве Р. Хачатряна это удвоение чувства национальной принадлежности наглядно выражается в построении натюрмортов—то как «Армянских», то как «Русских» по своему сюжету, т. е. по представленным в них вещам и плодам, причем и те, и другие оказываются для художника «своими», родственно ощущаемыми и равно любимыми.

